

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար*

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /ծածկագիր 3.2-1/

Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հողի հարկի գանձումը:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- միջնակարգ կրթություն.

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի իմացություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթը կկայանա 2011 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 14:00-ին Մեծամորի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

- Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները, բնօրինակների հետ միասին

- Հայտարարություն այն մասին, որ չի տառապում ՀՀ կառավարության 2005թ. մարտի 3-ի N -310-ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

- Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ

- Արական սեռի անձինք զին գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման պատճենով:

- Մեկ լուսանակար 3X4 չափի

- Անձնագրի պատճեն

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի գյուղապետարան և ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցեն ք.Արմավիր,Աբովյան 71 հեռ. 0237-2-76-49,2-07-70/

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից -16:00-ն բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2011 թվականի հոկտեմբերի 27-ը: